




06 DEC 2010

891. 99

Ա-91

01 JAN 2009

« Ե Ր Մ Ը Ն »

Խ Ղ Զ Ի
Խ Ա Յ Թ Ը

ՊԱՏՄԻԱԾՔ ՄՕՏ ԱՆՑԵԱԼԻՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեքտրօտպարան «ԷՊՕԽԱ» Գանձակալայա փող. N 3.
1911

BIBLIOTHECA



38501-62

ՄՕՏ ԱՆՑԵԱԼԻՑ

Մայիսեան մի գեղեցիկ երեկոյ էր. արևը դեռ նոր էր մայր ժողով, բոյսերի ու ծաղիկների թարմութիւնից օդի մէջ տարածւում էր մեղմ ու թովիչ բուրմունք: Աշխատանքից յոգնած նոր էի մտել սենեակս և նստած բաց պատուհանի առջև նայում էի հեռուն... Վշտալի, տխուր մտքեր պաշարել էին ինձ: Հեռւից երևում էր Մուղանի հարուստ դաշտը, ինչպէս արծաթ գօտի փայլում էր մրրկալի Արաքսը: Ահա և գեղեցիկ խաղաղը, անտառապատ Ամիր-Խաթունը, Խորհատը, Մօլլա-Նասրը-Էդդինը իրենց թաւուտ բարձունքներով: Ահա փոքրիկ, անհանգիստ ու պղտոր Քեօնդեպեանը, օձի պէս սողալով Քիրսի բարձունքներից վազում է դէպի տափարակը. նա չի վախենում այրող, տապ արևից, փարւելով մեծ Արաքսին՝ դէպի ծովը է շտապում: Նրա մի ափին ձգած է, կոտորածին բաղը, Սև-աշանը. իսկ միւս ափին՝ ծիրանոտ բաղը, Բէկիշանը և Խօշանդամի կալածը:

Չկայ մի փոքրիկ տեղ, որը իր տխուր պատմութիւնը չունենայ: Տեղիս անցեալը մութն է, արիւնա-

լի, արտասուքով շաղախւած. ներկան՝ անտանելի, իսկ ապագան ոչ մի բարիք չի խօստանում:

Գեղեցիկ բնութիւնն իր հարուստ, լայնատարած և գոյնզգոյն պատկերներով ոչ մի ուրախալի տպաւորութիւն չէր թողնում: Մարդիկ իրենց սովորութիւններով, շրջապատ բնութեան հարազատ զաւակներն էին. ուրախանալ, ծիծաղել, երգել չգիտէն. այդ բոլորը—անպատկառութիւն, ւմբոստութիւն է համարւում այնտեղ. իսկ լոյսը, արևը, գեղեցկութիւնը, սէրը՝ մահացու յանցանք: Ընդհակառակը տգիտութիւնը, կեղտը, քաղցը, սև դաւաճան մտքերը այս բնութեան զաւակների անբաժան ընկերներն են: Նրանց լեզու է տրւած, որպէսզի կարողանան իրենց ստոր արարքները ծածկել: Կնոջ աղաչանքը, մանկան արցունքը նրանց չի խղճահարում: Նրանք անգուլթ են. մտքերը դաժան, ձեռքերը ծանր, գնդակի ու գաշոյնի հարւածները անշեղ: Ուրախանում են միայն սպանութեան ժամանակ, որ և կատարում են անգուլթ, անողորմ, սոսկալի կերպով:

Ակամայ հարց է ծագում, ինչ անգուլթ, թըշւառ վայրում եմ ծնւել. և ցաւն այն է, որ նոյն տեղում էլ պիտի մեռնեմ:

Ներս մտաւ պառաւ աղախինս, և կոպիտ ձայնով ու թուքը ցրիւ տալով յայտնեց:

—Հիւր է եկել. իրաւունք է խնդրում գիշերելու:

Ես տանը մենակ էի. պատուիրեցի ներս հրաւիրել նրան, գոհ էի, ով ուզում է թող լինի: Մի բանի

րոպէից ներս մտաւ մի երիտասարդ, մօտ քսանընթեթը տարեկան. կակաղելով, խռպոտ ձայնով յայտնեց իր անունը՝ «Աբրօ». շտապեցի յայտնել իմ ուրախութիւնը և խնդրեցի նստել:

Ճրագի լոյսի տակ պարզ երևում էր երիտասարդի դէմքը. արծաթիթ մեծ-մեծ աչքերով, նիհար, կնճռոտ, բայց գեղեցիկ երեսով. բարակ բեխերով ու շրթունքներով: Ընդհանուր արտայայտութիւնը մոլթ, խորհրդաւոր տպաւորութիւն էր թողնում: Յուզւում էր ամեն մի փոքրիկ ձայնից, մինչև անգամ թէյիս գդալը շարժելիս, զլուխը բարձրացնում, աչքերը լայն չռում ու չորս կողմն էր նայում:

Սովորական հարց ու փորձից և մի քանի ընդհանուր խօսակցութիւնից յետոյ, տիրեց ծանր լռութիւն:

Հեռու թփերի միջից լսւում էր չարձաճի սոխակի ծլվլոցը. բաղցը, սրաձայն երգում էր նա. Լուսինը կապոյտ երկնակամարում հանգարտ լողում էր. տեղ-տեղ անցնում էր ամպերի տակից, նորից սիրուն արծաթագոյն երեսը երևան հանում և իր աղօտ ու մեղմ լոյսը տարածում ամենուրեք. աստղերը փռւած գոհարների պէս տարածւում էին շուրջ՝ փառաբանելով երկնքի վեհութիւնը:

Ես տեղիցս շարժեցի, հիւրս կարծես քնից վեր թռած՝ նայեց չորս կողմը և հացրեց.

—Լսում է՞ք սոխակի երգը:

Պատասխանիս չսպասելով շարունակեց նորից.

—Սոխակի մարին ձուերի վրայ նստած է, իսկ

նրա արուն ցերեկը կերակուր է բերում, իսկ գիշերը փառաբանելով փայփայում, գլարճացնում նրան:

Ասում են, որ սարգի էզը իր արուի հետ գուգորտելուց յետոյ ուտում է նրան:

Նա կանգ առաւ. փոքր ինչ մտածեց և ապա շարունակեց.

— Ես հասկանում եմ արուին. նա այդ միջոցին սոսկալի ցաւ էր զգում, բայց այդ ցաւը քաղցը հաճոյութեամբ էր պատճառում նրան:

Որովհետեւ նրա այդ կարծիքը ինձ համար օտարոտի էր, գիմեցի նրան, ասելով. — Ես բոլորովին չեմ հասկանում, ինչո՞ւ նա երջանիկ և հաճելի ցաւ պիտի զգար:

— Ինձ համար էլ այդ բոլորը անհասկանալի էր. մինչև որ խորը հոգեւս մէջ չզգացի, չպարզեց, պատասխանեց նա:

— Զգացել էք, չէք զգացել, չգիտեմ. ինչպէս տեսնում եմ, փառք Աստուծոյ, դուք դեռ ողջ ու կենդանի...

— Այդ հարց է... Նա մի քանի անգամ սենեակում անցուղարձ արաւ, ապա նորից նստելով թիկն տւեց ու շարունակեց:

— Եթէ ձեզ համար ձանձրալի չի լինի, կը պատմեմ ձեզ այն բոլորը, ինչ որ անցել է զլխովս:

— Մենք մինչև այժմ իրար չենք պատահած, գուցէ սրանից յետոյ էլ չհանդիպենք. այսպէս սկսեց հիւրը իր պատմութիւնը: Ես քաղաքում յայտնի վաճառական էի. ունէի տուն, լաւ կարողութիւն. ստացել եմ

միջակ կրթութիւն: Այսինքն, ուղում եմ ասել, կար բոլոր ընդունւած յարմարութիւնները՝ երջանիկ քաղաքացի, լաւ ամուսին ու խոնարհ հպատակ լինելու համար: Սակայն մի սոսկալի և տառապանքով լի դէպք տեղի ունեցաւ, որը ինձ թէ բարոյապէս, թէ ֆիզիքապէս քայքայեց, խորտակեց իմ ամբողջ կեանքը: Երկու տարի է, բժշկւում եմ Եւրոպայում, բայց իզուր: Այժմ ուխտի եմ գնում, պառաւ մօրս ցանկութիւնը կատարելու համար: Դուք զարմանում էք. իզուր. ես այլևս կամքի ոյժ չունեմ:

Քաջ գինւոր Դիմիտրիյ Մելիքեանին, այն Դիմիտրիին, որը յայտնի մերկացնող և անգնահատելի փաստաթղթեր ձեռք բերեց ու դորանով շատ մարդկանց կեանքը ազատեց և որը 190... թւի Յունիսի 12-ին այդ խառը ժամանակին անյետ կորաւ. անունը լսել էք, նրան ձանաչում էք:

Ինձնից դրական պատասխան ստանալով շարունակեց:

Այդ նոյն Դիմիտրիին իր ընտանիքով Գեշթազու գիւղումն էր ապրում: Նա տաժանակիր աշխատանքից վերադարձած, մրրկալի կեանքի բովով անցած, փորձւած մի երիտասարդ մարդ էր, որը կռիւներէ ժամանակ իւր յանդուգն քաջութեամբ սարսափ էր զրցում թշնամիների սիրտը. իսկ հանգիստ, խաղաղ ժամանակ՝ թղթախաղութեամբ, քէֆիւրով ու արբեցողութեամբ էր զբաղւում: Նրա հայրը, կամենալով որդուն յետ կանցնել գինեաներից, վճռեց նրան ամուսնացնել. բայց որովհետեւ հաւատացած էր, որ շատ թէ քիչ

որդիասէր ծնող իր աղջիկը չի տալ Դիմիտրիին կնութեան, ուստի կանգ առաւ դիւղում ապրող մի բարոյապէս ընկած կնոջ աղջկայ՝ Սաթենիկի վրա:

Հարսնախօսութեան և զանազան միջոցներով աղջկայ ձեռքը խնդրելու հարկ չկար, քանի որ այդ կինը ուրախ էր, որ ազատուում է իր զաւակից: Մայրը երկար չմտածեց, աղջկայ կամքը չհարցրին, որովհետեւ դա նշանակութիւն չէր կարող ունենալ: Մի քանի օրից տանուկնոյս տարեկան Սաթենիկը այնքան սիրուն հարսն էր, որ կարող էր ամեն մի տան շնորհալի զարդ լինել:

Մօտ մի տարի երիտասարդ ամուսինները հրաշալի կեանք էին վարում: Դիմիտրին խաղաղ գործով էր զբաղւած, իսկ տիկին Սաթենիկը, սոխակի պէս, առաւօտից մինչև երեկոյ երջանիկ երգում էր:

Աւան ապէրը՝ Դիմիտրու հայրը՝ ճերմակ միւրուքը մաքուր սանրած, եկեղեցու բակում ուրախ-ուրախ, պարծենալով խօսում էր իր հասակակիցների հետ: — Աստուած եթէ ինձ մի կողմից գրկել է, միւս կողմից փառք իրան, Սաթենիկի պէս հարս է պարգևել, տունս երջանկացրել: Սակայն նրանց համար այդ երջանկութիւնը երկարատե չեղաւ: Աւան ապերը և կինը մի շաբաթայ ընթացքում մեռան, իսկ Դիմիտրին շուտով յոգնեց Սաթենիկից և սկսեց կրկին յաճախել իրան սովոր գինիտները:

Ի միջի այլոց, ես չեմ ուզում ձեզ մանրամասն պատմել Քեշթաղլու խառն ապրող ուսու, հալ, թուրք ազգաբնակութեան հասարակական կեանքի մասին: Ի

նկատի ունեցէք միայն մի բան, որ Քեշթաղլուն քաղաքից շատ մօտ գտնւելով, քաղաքի և գիւղի երիտասարդները միանում և իրենց ազատ ժամերը նոյն տեղի գինետներումն էին անցկացնում:

Հօրեղբօրս որդին նոյն գիւղում, Դիմիտրիի տան դիմաց գինետուն էր պահում. ես իմ առևտրական գործերով Քեշթաղլու գնալիս՝ այդ տանն էի իջնւում. ինձ հետ վերցնում էի զանազան ապրանքներ՝ մետաքսէ ընտիր կտորներ, ժապաւէններ, հոտաւէտ օծանելիքներ՝ գիւղում ծախելու համար: Տիկին Սաթենիկը, ամուսնու բացակայութեան ժամանակ գալիս էր բարեկամիս կնոջ մօտ ժամանակ անցկացնելու, ուստի դժբախտութիւն ունեցայ այնտեղ նրա հետ ծանօթանալու:

Գեղջուկ պճնասէր օրիորդներն ու տիկիներն՝ իմ յաճախորդներն էին. առանձին-առանձին, միմեանցից ծածուկ ինձ յանձնարարում էին որ ամենավերջին տարազի գեղեցիկ ապրանքներից բերեմ միմիայն իրենց համար: Ես խօստանում էի և երբ լսում էին, որ եկել եմ գիւղը, թափւում էին գլխիս. իսկ ես օգտւելով առիթից, քաղաքի մնացորդ անպէտք ապրանքները թանկ գներով սաղացնում էի սրանց:

Թէև Տիկին Սաթենիկի նիւթական միջոցները թոյլ չէին տալիս հետեւել պճնասէրներին, սակայն գիւղում չկար մի օրիորդ, կամ տիկին, որը կարողանար նրա նման էփան ու ճաշակով հագնւել: Շատ անգամ նկատում էի, որ նա այս կամ այն ապրանքին հաւանութիւն էր տալիս. այդպիսի դէպքերում ես միշտ

գիշում էի նրան էժան գնով: Նա հասկանում էր այդ, բայց նրա ինքնասիրութիւնը չվիրաւորելու համար, հաւաաացնում էի, որ այդ կտորները ֆապորդէ են... Սաթենիկը իսկոյն պահում էր կտորը, որ ուրիշները չտեսնեն:

Նա թէ իր, թէ գեղջկուհիների հագուստները ինքն էր կարում, և շատ ճաշակով. ուստի գիւղի բոլոր զարդասէրները նախանձում էին. այնուամենայնիւ չկար մէկը, որ չգովէր նրան: Ես շատ անգամ պատմում էի, թէ ինչպէս են հագնւում բաղաւթում, կամ զանազան տարազներ էի բերում և միշտ հետեւեալ անգամին գալուց նկատում էի, որ նա իր որևէ զարդը յարմարեցրել է իմ պատմածներին:

Հետզհետէ հագուստեղէնի նկատմամբ, իմ խորհուրդներն ու նկատողութիւնները պահանջ դարձան նրա համար: Մինչև անգամ տարազից ամենաչնչին շեղումն անգամ, կամ մի որևէ անկանոնութիւն, նա իրան երբեք չէր թոյլ տալիս: Ես եթէ նկատում էի որևէ պակասութիւն, հետեւեալ անգամին ինձ հետ վերցնում էի ամենանուրբ գործածքներից սկսած, մինչև ամենալաւ սապոններ, օծանելիքներ: Սկզբում առաջարկում էի նրան առանց վճարի ընդունել որևէ իր, նա հրաժարւում էր. դա ինձ վիշտ էր պատճառում, ուստի ստիպւած՝ վաճառում էի չնչին գներով. բայց յետոյ սովորեց ընդունել և առանց վճարի, որի փոխարէն արժանանում էի նրա սիրալիր ժպտին: Հարուստ գեղջկուհիները նախանձում էին աղքատ Սաթենիկին.

ինդրում էին, իրենց համար էլ բերեմ այն կտորներէց, սապոններից, օծանելիքներից, որը գործ էր ածում Սաթենիկը. փոխարէնը պատրաստակամութիւն յայտնելով, տրամադրութեանս տակը դնել, ոչ միայն ամուսինների գրպանը, այլ և պատիւը: Խոստանում էի վերագարձիս էժանագին ապրանքներ բերել և հաւատացնում էի, որ դրանք ամենաընտիրներն են: Օգտւում էի ամուսինների գրպաններից և հրաժարւում երկրորդից, որովհետև այն, ինչ նշանակութիւն ունէր իմ աչքում մի տարի առաջ, այժմ Սաթենիկի հետ ծանօթանալուց՝ կորցրել էր իր հմայքը:

*
* *

Գիւղը գալիս, Սաթենիկին միշտ բարեկամիս տանն էի գտնում. բարեկամուհուս օգնում էր իր տնային գործերում: Նրա ձեռքից ջուր առնելը, կամ նրա պատրաստած թէյը խմելը, ինձ առանձին ախորժակ, հաճոյք էր պատճառում: Եւ այդպէս, — ստանան ոչ մեռել է, ոչ էլ կմեռնի: Մի գեղեցիկ օր զգացի, որ միանգամայն գերւած եմ: Առաւօտից մինչև երեկոյ որքան էլ զբաղւած լինէի, Սաթենիկը աչքիցս չէր հեռանում, նա պատկերանում իմ առաջ, երեակայութեանս աշխարհներում միշտ նրանով էի զբաղւում: Եթէ մի քանի օր շարունակ չէի տեսնում նրան, մի ծանր թախիժ տիրում էր ինձ, վշտով համակւում էր սիրտս: Ընտանեկան կեանքը, ընկերական կերուխումի շրջանները կորցրել էին իմ աչքում իրենց

դրաւչութիւնը: Այդ բոլորից յետոյ կեանքս, առանց Սաթենիկի ներկայութեան, մասնակցութեան, անտանելի էր դառնում ինձ համար:

Ամեն օր առիթներ, պատճառներ էի որոնում Քեշթազլու գնալու. եթէ Սաթենիկին բարեկամիս տանը չէի գտնում, օրս սեանում էր, հոգիս վըր-գովում. ծանր արտմութիւն տիրում ինձ ու այդ ժամին ողորմելի էի ես: Շնորհիւ շողոքորթութեանս և ընծաներիս, որ ստանում էր տանտիկինս ինձնից, Սաթենիկը համարեայ միշտ մօտս էր գտնուում: Ամեն անգամ բաժանելիս ինձ մխիթարելու համար, նա մի քնքոյշ հայեացք էր գցում վրաս, և մինչև վերադարձս դա ինձ հանգստութիւն չէր տալիս...

Գործերս այնպէս կարգաւորեցի, որ ամեն օր Քեշթազլու գնալս անհրաժեշտ դարձաւ: Սաթենիկը անբաժան մօտս էր լինում: Ես նկատում էի, որ առևտրով զբաղածս ժամանակ, Սաթենիկը հեռու նըստած, անշարժ, անթարթ աչքերով, հայեացքը ինձ ուղղած՝ ընկնում էր խոր ինքնաթողացութեան մէջ և երբ մեր հայեացքները հանդիպում էին իրար, նա խայթածի պէս վեր էր թռչում ու տեղը փոխում: Ապրանքներին նայելիս, կամ որեւէ իր մատուցանելիս, երբ ձեռքս դիպչում էր նրան, մարմնովս սառնում էր անցնում, արիւնը խփում էր գլուխս. միտքս շփոթւում ու ես անզգայանում էի: Այդպիսի բոլէներին ստիպւած շուր էի խնդրում: Սաթենիկը իսկոյն ջրով լի ըրածակը մեկնում էր ինձ: Ես պարզ նկատում էի, որ

նա ևս յուզւած էր, աչքերը փայլում էին կրակի պէս, ձեռքերը դողում, շնչառութիւնը արագանում:

Մենք սկսել էինք անխօս, լուռ հասկանալ իրար: Սովորական զրոյցը, խօսակցութիւնը իրենց նշանակութիւնը կորցրել էին: Ես սկզբից և ետ չէի կարողանում թաղցնել իմ գերած լինելս, իսկ իմ ամենօրեայ գիւղը յաճախելու պատճառը Սաթենիկի համար պարզ ու հասկանալի էր դարձել: Մենք երկար չկարողացանք դիմանալ. մի գեղեցիկ օր, առանց երկար ու խորունկ բացատրութիւնների զգացինք, որ սիրում ենք միմեանց. անբաժան ապրել անկարող ենք և ջերմ, երկար, խանդոտ համբոյրներով արտայայտեցինք մեր բուռը սէրը:

Այդպէս շարունակել այլևս անհնարին էր, ուստի յարմարութիւն ստեղծելու համար, մի օր քաղաքում ծանօթացայ Դիմիտրիի հետ: Մեր տան ճաշկերոյթ սարքելով հրաւիրեցի նրան ու մի քանի օր շարունակ քէֆ էինք անում միասին:

Շատ կարճ ժամանակամիջոցում Դիմիտրիի սիրտը այնքան զրաւեցի, նա այնքան մտերմացաւ հետս, որ իր սրտի խորագոյն գաղտնիքները բաց էր անում ինձ, «սրտակից եղբայր» անւանում ու շատ անգամ իր առօրեայ ծախսերի համար, ինձնից ժամանակաւորապէս փող ստանում: Նա խօստովանւում էր, որ իր հարազատ եղբորից ինձ շատ է սիրում, որ պատրաստ է իր կեանքը զոհելու ինձ համար: Այնուհետև, գիւղը գնալիս՝ պարտաւորւած էի նրա մօտ իջևանել, հակառակ գէպքում նա վերաւորւում ու մի քանի օր շարունակ խռովում, ինձ հետ չէր խօսում:

* * *

Նորից գարուն էր. բնութիւնը նոր էր կենդանանում. ծառերը ծաղկել էին, բաղու բաղչա պճնել գարգարել էին: Սովորականի պէս իջևանեցի Դիմիտրիի տանը: Դուռը բացէր, մտայ սենեակը. Դիմիտրին բացակայում էր: Սաթինիկը սքանչելի գեղեցիկութեամբ, ընքոյշ մատները գոյնզգոյն մատանիներով զարդարած, չքնաղ իրանով կարմիր բարձին յենւած, վառ երազանքների մէջ էր: Ինձ տեսնելով վեր թռաւ, բայց տեղիցը չշարժւեց, սև, փայլուն, աչքերով, մի խանդոտ հայեացք գցելով վրաս՝ սիրուն ձեռքը մէկնեց դէպի ինձ. մի զորեղ ցնցում, մի սարսուռ, դող զգացի, որից իսկոյն կարմրեց երեսս, շնչառութիւնս արագացաւ, շրթունքներս դողում էին: Աչքերս մթնեցին, մի դիւթական կախարդիչ կրակ վառւելով ներսս, տարածւեց ամբողջ մարմնովս:

Աշխարհը մոռացած, ընկայ Սաթինիկի առաջ, համբուրում, երկրպագում էի այն անսման գեղեցկութիւնը, պաշտում էի նրան. նա էր իմ սրբութիւն սրբոցը: Կիրքն ու խանդը հուր էին դարձել, այրում, տոչորում էին ինձ:

Թէ ինչպէս, չգիտեմ, ես արդէն Սաթինիկի գիրկն էի նետւել, լողում էի կրքերի անզուսպ ծովում... Նա իր հոլանի թևերը գեղեցիկ, քնքոյշ մատներով վզովս փարւած հպում էր ինձ իր կրծքին:

Անսկարագրելի տեսիլք էր... Այս բոլորը յան-

կարծ, անօրինակ, անհաշիւ, անմիտ կերպով իրար խառնեցան: Աշխարհիս վայելչութիւնները չբացան. իրենց նշանակութիւնը կորցրին: Այժմ երջանկութեան մի այլ աշխար ստեղծւեց ինձ համար:

Պատմողի դէմքը արտայայտում էր անսահման կարօտ: Նա ճակատի քրտինքը սրբեց, ապա շարունակեց:

— Ես շատ անգամ եմ դիտել, խորհել՝ կոյ արդեօք տղամարդու համար բնութեան մէջ մի այլ գեղեցկութիւն, որ կարողանար մարտնչել, մրցել կնոջ գեղեցկութեան հետ...

Երբ ուշքի եկայ, Սաթինիկը գրկումս էր, գրկելով, հենւած ուսիս՝ չքնաղ նայւածքով գերում էր ինձ. նրա փայլուն, կրակոտ աչքերը ինձ վայելչութիւն, կեանք էին խօստանում: Նա այդ րօպէին խոնարհ, համեստ էր և ինչպէս լոյս, լուսաւորում էր շուրջը. իսկ ես ըմբոստ հոգով, ինքնաբաւական՝ արբեւում էի նրա սիրալիր փաղաքշանքներից:

Այդ օրւանից ինձ համար սկսեց մինչև այդ չեղած, անհանգիստ, սիրտ մաշեցնող, բայց և նոյնքնան քաղցրը մի նոր կեանք: Իմ աչքում բնութիւնը, առանց Սաթինիկի հմայիչ գեղեցկութեան, իր նշանակութիւնը կորցրել էր: Ես տարւած, կլանւած էի միայն նրանով, նրանով էի միայն ապրում: Գիշեր ցերեկ նրա պատկերը մտքիցս չէր հեռանում. ժամերով նստած՝ կամ պառկած՝ մտաբերում, պատկերացնում էի նրան իր ամբողջ էութեամբ, մարմնի ամենանուրբ գծերով ու ինչքան շատ էի մտածում, այնքան նորա-նոր գեղեց-

կութիւնի էի գտնում նրա մէջ: Հայր, մայր, եղբայր, ընկեր, հարստութիւն, հաւատ իրենց նշանակութիւնը կորցրել էին: Չկար մի սրբութիւն, որ չըզոհէր նրա համար, մինչև անգամ պատիւս:

* * *

Անցաւ ինձ համար վեց, երջանիկ ամիսներ:

Ծնողներս, բարեկամներս նկատել էին մեր գաղտնի համաձայնութիւնը, շատ դէս ու դէն էին ընկել, գիր, թալիսման և ուրիշ միջոցներ չէր մնացել՝ որ չգործադրէին, սակայն իզուր. ինձ չկարողացան համոզել, որպէսզի ամուսնանամ մի ուրիշի հետ:

Ամեն անգամ գիւղը գնալիս վճռում էի վերջնականապէս Սաթենիկի հետ խօսել, խնդրել, որ նա ամուսնաթող լինի, բայց հէնց որ տեսնում էի նրա բարձր, վայելչակազմ հասակը, երկար սև մազերը, խորը կրակոտ աչքերը, սպիտակ խաւոտ երեսը, կարմիր այտերն ու վարդանման շրթունքները, որոնք բացւելուց երևան էի հանում մարգարտանման աւտամների շարքը. մանաւանդ, նուրբ, ճաշակով կարած հագուստը, որ զարդարում էր նրա երիտասարդ մարմնի աննման, սքանչելի գեղեցկութիւնը՝ արքենում էի: Ահա այդ չնաշխարհիկ ստեղծագործութիւնը դիւթում, կախարդում էր ինձ. և ես ընկղմւած՝ կրքերի ծովում, վերանում, ցնծում էի... առանց ինձ որևէ հաշիւ տալու:

Մի օր, երեկոյեան Դիմիտրիի հետ քաղաքում

ընթրիքի էինք հրաւիրւած: Գիշերւայ ժամը 10-ին մի պատրւակով հեռացայ հիւրատնից և անմիջապէս ճանապարհեցի Սաթենիկիս մօտ: Նա ինձ բոլորովին չէր սպասում, տխուր նստած ճրագի տակ՝ կար էր անում և ուսերէն քաղցր ձայնով երգում: Ինձ որ տեսաւ, մի թեթև ժպիտ շարժեց գէմքին, երկու ձեռքս ամուր սղմեց և կարօտալից համբուրեց: Իմ հարցին, թէ ինչո՞ւ է տխուր, նա գլուխը խոնարհեց. և երկու փայլուն, մարգարտանման կաթիլներ արագ գլորւեցին նրա աչքերից:

— Դառն է ճակատագիրս. անցեալս սև է, ապագաս մութ, անորոշ. իմ միակ յոյսը, միւլթարութիւնս դու ես. չգիտեմ, արդեօք երկամբ պիտի լուսաւորես իմ մութ ուղին և ի՞նչ է լինելու սորա վերջը...

— Այդ ի՞նչ տարօրինակ հարց է, միթէ ուզում ես վերջ տալ մեր բարեկամութեան:

— Ինձ կենդանութիւն, կեանք պարգևող, խաւար կեանքս լուսաւորող Աբբօ, աղաչում, խնդրում եմ ազատիւր ինձ նրանից...

Նա չոքեց. գրկեց ոտներս, սկսեց ձեռքերս համբուրել. արտասուքը առատութեամբ հոսում էր նրա աչքերից, նա անգոր էր գգում իրեն, աղաչում էր, խնդրում էր ինձ...

— Օհ, այն դառը գիտակցութիւնը որ ցման վիճակւած է ինձ իմ առած մարդուն պատկանել... Այն զգւելի համբոյրները, որ անվերջ պիտի շարունակւեն... Այլևս անկարող եմ տանել նրա սերը փայփայանքը, ես

38501-62



նրա հետ չեմ կարող ապրել. ես սիրում եմ միայն քեզ: Ես քեզ աստուածացրել եմ, դու ես միայն ինձ կեանք տուող:

Նա խօսում էր լի աղերսանքով, նրա ձայնի մէջ չէր նկատուում ոչ մի կշտամբանք, ոչ մի բողոք իմ գէմ:

— Դրա փոխարէնը քեզ տւել եմ այն ամենը, ինչ որ ունէի՝ պատիւս, մատաղ կեանքս, սիրտս, իմ հանգստութիւնը: Ոչ ոք չգիտէ և երբէք չի իմանայ, թէ որքան եմ տանջւել սկսած այն օրից, երբ քեզ...

Ես մի թոյլ էակ էի, դու էիր իմ կամքը, դու կարող էիր ինձ հետ անել այն, ինչ որ ցանկալի էր քեզ համար: Ես պատրաստ եմ այժմս էլ ընկնել քո ոտքերի տակ: Դու կարծում ես, ես չեմ զգուշանում ինձ-նից, իմ խիղճը ինձ չի աանջում: Ես մի սոսկալի մեղք եմ գործել, յանցանք կատարել, բայց և այնպէս ճակատագիրս է, պիտի շարունակեմ...

— Գնանք, Սաթենիկա, գնանք այստեղից: Մեր հայրենիքը մեզ երջանկութիւն չի խօստանում, գը-նանք:

Ո՛ւր, սիրելիս, ո՛ւր գնանք:

— Ես որոշել եմ քեզ հետ միասին Ռուսաստան գնալ:

— Մի՞թէ Ռուսաստանը երկնքի տակ չէ գտնուում. նա այնտեղ էլ մեզ հանգստութիւն չի տալ...

Ես գոհ էի, որ այս կարևոր խնդիրը ինքը Սա-թենիկը բացեց, ուստի վերջնական որոշման համար, խնդրեցի սպասել, մի քիչ հանգստանալ, ապա խորհել

միասին: Նա գնաց լացւելու, երեսը սրբեց, եկաւ բռնեց իր տեղը և շարունակեց:

— Ի՞նչ արած, ես ոչ միայն չեմ սիրում, այլ իմ էութեամբ, զգուշում ասում եմ նրան: Բաւ է, որքան լուել եմ, կեանքս ու օրս խաւարացրել: Իմ անիծւած մայրս, թող նա գերեզմանի մէջ էլ հանգստութիւն չգտնի, իմ կամքի հակառակ տւեց ինձ նրան: Ես որոշել էի եկեղեցում քահանային խօստովանել իսկու-թիւնը. սակայն ընկերուհիներս խորհուրդ չտւին, հա-մողեցրին, որ եթէ ընդգիմանամ, Պետրոս քահանան, հասարակութիւնը բռնի կերպով, ծեծի ենթարկելով կը պսակեն ինձ: Այդ բոլորը անցած է: Այժմ միակ յոյսս դու ես...

— Սիրելիս, լսիր ինձ, պատրաստւիր, անմիջա-պէս հեռանանք այստեղից. ինչպէս ասացի, այս տեղը մեզ երջանկութիւն չի խօստանում. Դիմիտրին մեզ հանգստութիւն չի տալ. միակ ելքը դա է:

Այնուհետև երկար աշխատեցի համոզել նրան. խօստանալով ամեն ինչի առաջն առնել. բայց նա լսել անգամ չէր ուզում. նա համոզւած էր, որ Դի-միտրիից ծածկւել անկարող ենք:

— Նա երկրագնդի ամեն ծայրումն էլ մեզ կը-գտնի: Բաւական է, տղայամիտ խօսակցութեամբ սիր-տըս մաշես անտեղի. չէ, չէ, Չինաստան գնանք, Սո-սեց նա վրդովւած ու բարկացած. և արտասուքի կա-թիլներ առատ թափւում էին նրա աչքերից:

— Ամբողջապէս քեզ եմ պատկանում, այլևս ան-կարող եմ ուրիշի հետ ապրել. Ես քեզ եմ սիրում

իմ, սիրտս քեզ է պատկանում, քեզանից խլել ինձ ոչ ոք իրաւունք չունի, ես չեմ ուզում. թող ինձ քարկոծեն, պատրաստ եմ մահ ընդունել, բայց յետ կանգնել երբէք...

Նա խորապէս վրդովւում էր ու յուզւում: Ստիպւած էի համբոյրներովս, աղաչանքներովս հանգստացնել նրան:

— Սաթենիկս, հոգեակս, պէտք է զգոյշ լինել, աղերսում էի ես. ամուսինդ եթէ իմանայ՝ մեզ կենդանի չի թողնի: Նա տգիտութեան, խաւարի մէջ ապրող մարդ է, նրանից պէտք է զգոյշ լինել:

Եւ դու հաւատացած պէտքէ լինիս, որ եթէ ես այդ զգւելի արարածի գգւանքը, տուփանքը լուռ տանում եմ, դա միայն քեզ համար է. որովհետեւ, համոզւած եմ, նրա սրի առաջին զոհը անպայման դու պէտքէ լինիս, իբրեւ նրա տան պատիւը արատաւորողը:

Ես Դիմիտրիի վրէժից ազատւելու միջոցը միմիայն փախուստումն էի գտնում, ինչքան մտածում էի, ուրիշ ոչ մի ելք չկար: Բայց իմ բերած բոլոր իրաւացի փաստերը ապարդիւն անցան, նա լսել չէր ուզում. ու ոչ մի միջոցի հետ չէր հաշտւում: Դու ես իմ ընտրածը, դու ես սե օրս, մեռած կեանքս կենդանացնողը: Եթէ ինձ սիրում ես, ազատիւր այդ տեղի հրէջից. կամ խօստովանւիր որ քո Սաթենիկը մի թոյլ, անարժան կին է, որին անպատիժ կարելի է վիրաւորել, մանաւանդ, որ նպատակիդ հասել ես արդէն: Այդ դէպքում լաւ է դու ինձ միանգամից ապանես: Եթէ դու մինչևանգամ դաւաճանես ինձ,

դարձեալ իմ սէրը անփոփոխ կըմնայ. առանց երդւելու, առանց հաւատացնելու սիրում եմ քեզ: Ես երջանիկ եմ ու երբէք իմ Սբբոյիս չեմ մօռանայ, հաւառակ դէպքում ես ինձ կըսպանեմ: Այդ էր Սաթենիկի պատասխանը լինում միշտ:

Ինձ համար անտանելի էր, սիրտս տրաքւում էր, որ նա յեղաշրջած կերպով էր հասկանում իմ ասածները: Չորսած՝ համբուրում էի նրա ձեռքերը, ոտքերը, աղաչում, ինձ հասկանալ. հաւատացնում էի, որ ինքն է կեանքիս առաջին և վերջին սէրը: Եւ այդպէս մի կերպ համոզեցրի, մի քանի օր էլ համբերել, մինչև որ կարողանում մի ուրիշ ելք գտնել:

* * *

Դիմիտրիի նիւթական միջոցները չէին համապատասխանում իր ունեցած ծախսերին, սակայն կար ինձ պէս մի բարեկամ, որը պատրաստ էր անվերջ օգնել նրան: Շնորհիւ այս վերջին հանգամանքի, նա անկասկած հաւատում էր իմ անկեղծութեանը և ինձ ուրիշ անուն չէր տալիս, բայց եթէ ոչ՝ «աղպեր»: Թւում էր, որ նա ինձ անկեղծ սիրում էր, բայց միևնոյն ժամանակ, ձեռքի մէկը գրպանիցս չէր հանում:

Մի օր սովորականի պէս գնացի նրանց տունը Դիմիտրին այլալուծ էր, սուրը ձեռքին մերկացրած, զայրացած, աչքերը չռած, մի կէտի էր նայում: Տան բոլոր կահ կարասիքը թափւած, մինչև անգամ մի

մասը կոտորուած էր: Սաթէնիկը վառարանի մօտ սարսափահար կանգնած՝ դողդողում էր: Կարծեցի թէ Դիմիտրին հարբած եկել, կատաղել է: Երբ ինձ տեսաւ, հրամայեց կնոջը հեռանալ. «քաշէ՛ր, կորի՛ր», բղաւեց նա կցելով դրան և մի փողոցային հայհոյանք, որից Սաթէնիկը կարմրեց, մի յանդուգն հայեացք գցեց Դիմիտրու վրայ. մի հեգնական արհամարանքով լի ժպիտ անցաւ նրա երեսով և լուռ, համարձակ քայլերով հեռացաւ:

Դիմիտրին գրպանից հանեց մի նամակ, հռեց ինձ կարգալու. նամակը անստորագիր էր: Հեղինակը արջի ծառայութիւն էր մատուցանում. զգուշացնում էր Դիմիտրիին եմ և Սաթէնիկի մէջ եղած յարաբերութիւնների մասին: Նամակի մանրամասնութիւններից իսկոյն հասկացայ, որ նախկին բարեկամուհուս գործն է, որին վաղուց անուշադրութեան էի մատնել ու նւէրներ էլ չէի նախիր:

Ի՞նչ պէտք էր անել, «աղպերս» սուրը ձեռքին կանգնած՝ երեսիս էր նայում և ես, որ հաստատ գիտէի, նրա խղճի վրայ քանի, քանի ոճրագործութիւններ կանը, մի ակնթարթում ձեռքս գրպանս տարայ, Բրաունինգիս արգելիչը իջեցրի, որպէսզի նրա յարձակումից պաշտպանւեմ: Միևնոյն ժամանակ նկատեցի, որ նա բացատրութիւն է պահանջում, ուստի դիմեցի դերասանութեան, և իբր յուզւած ասացի:

— Դու թոյլ տւի՛ր քեզ հաւատալ մի անստորագիր նամակի և ինձ ծանր վիրաւորանք հասցնել, ես ինձ կը սպնեմ, բացականչելով այս խօսքերը ատըր-

ճանակս շտապ հանեցի, իբր ինքնասպանութիւն գործելու: Դիմիտրին սուրը ցած թողեց, արագութեամբ ձեռքիցս բռնեց խանգարելու դիտաւորութեամբ, բայց ես ատրճանակը դիտմամբ պայթեցրի. գնդակը դիպաւ յետևի պատին: Նոյն ըսպէին Սաթէնիկը գունատուած՝ ներս վազեց և ամուսինները միասին ատրճանակը խլեցին ձեռքիցս: Սաթէնիկը իսկոյն, թէ սուրը, թէ ատրճանակը դուրս տարաւ:

Դիմիտրին միամտօրէն հաւատացած էր, որ ինքը արգելք եղաւ իմ ինքնասպանութեանը: Բայց նա չարաչար սխալւած էր, գնդակը պատրաստած էր ոչ ինձ համար, նոյն իսկ միւս գրպանումս էլ մէկը պատրաստ կար:

Ատրճանակի պայթումից յետոյ, արհեստականօրէն, իբր թուլացած՝ նստեցի, շունչս արագացրի, ոտքերս յատակն էի խփում, մազերս փետում, լաց լինում, խնդրում, աղաչում, որ թոյլ տան ինձ կեանքիս վերջ տալու: Երդւում, հաւատացնում էի, թէ միևնոյն է, ինձ պիտի սպանեմ, այս աշխարհում այդպիսի վիրաւորանքից յետոյ այլ ևս չեմ կարող ապրել:

Խեղճ Սաթինիկը, որ իսկութիւնը չգիտէր, գոյնը թռել, դեղնել էր. ջուր բերեց ճակատիս, կուրծքիս սրսկեց, իր դողդոջուն ձեռքերով մի քիչ էլ խմացրեց ինձ: Ես կամա-կամաց հանգստացայ: Կասկածը միանգամայն փարատելու համար օձի պէս փաթաթւեցի փոշմանած «աղպօրս» վզովը: Յուզայական համբոյրներով հաւատացնում էի նրան, որ նամակի բո-

վանդակութիւնը ստոր զրպարտութիւն է: Ձեռքս իմ
և նրա կրծքին խփելով, «ես մեռնեմ, քեզ թաղեմ»
ասելով, կոկորդիլոսի արցունք էի թափում. համո-
զում, որ թշնամու գործ է, որ նամակագիրը մտա-
դիր է եղել, թէ մեր աղբերութիւնը և թէ իր, Դի-
միտրու ընտանեկան կեանքը խորտակելու: Երդեցի
ժնտրել այն անիրաւին և իր արժանի պատիժը տալ:

Դերս այնպիսի հմտութեամբ ու վարպետու-
թեամբ էի կատարել, որ գլուխս ցաւում էր:

Դիմիտրին փոշմանել էր. խօստովանեց, որ ան-
զգոյշ է վարւել: Նամակը չպէտք է ցոյց տայի, մե-
ղաւոր եմ՝ կրկնում էր նա շուտ-շուտ: Ներողութիւն
խնդրեց, համբուրեց ճակատս ու երգեց. «Կուր գետի և
Սրաքսի արանքում էլ լինիմ չեմ մօռանալ այն միլ-
լետին, որը համարձակւել է ինձ այսքան ծանր վի-
րաւորանք հասցնել: Երդուում եմ հօրս, մօրս գերեզ-
մանով և քո անգին արևով, մինչև որ նամակի հեղի-
նակի արիւնից չխմեմ ու կուրծքս չքսեմ, չեմ հան-
գատանալ»...

* * *

Ես վերադարձայ տուն. Միքանի օրից յետոյ Սա-
թինիկից նամակ ստացայ, որով գրում էր. «Ես գգում,
պատրաստում եմ մայր լինելու, սիրելիս, Աբրո ջան,
որովհետև լոկ նրա ներկայութիւնը, քաղցր խօսքերը
նոյնիսկ փաղաքշանքները, ինձ համար անտանելի են.
համբերութիւնս հատնում է, սիրտս պատուում է,

մահը գերադասում եմ այսպիսի կեանքից: Ուզում
եմ նրան պատմել իմ ճշմարտութիւնը և վերջ տալ այս
անտանելի կեանքին... Բայց քո և զաւակիդ վտանգի
ենթարկելը արգելք է հանդիսանում ինձ: Քանի ոյժս,
համբերութիւնս չի հատել ես կրլոեմ, քայց հակառակ
պարագային, հետևողների մասին խօսք տալ անկա-
րող եմ: Թող քեզ համար պարզ լինի, քանի նա կեն-
դանի է, քո Սաթինիկի օրը սև է: Չգւանքն ու ատե-
լութիւնը ամեն մի բոպէ կարող են հանել ինձ համ-
բերութիւնից: Ես կարող եմ մօռանալ, ինքս ինձ հա-
շիւ չտալ... Ի սէր Աստուծոյ, խղճա, գթան գոնէ քո
անմեղ զաւակին, եթէ չես խղճում քո անբախտ Սա-
թինիկին»:

Իմ հայր լինելու լուրը ինձ շատ ուրախացրեց.
նամակի միւս մասին ուշադրութիւն չդարձրի. Դի-
միտրիի մասին աւելին չէր յայտնում՝ քան ես գի-
տէի: Հետեւալ օրը գնացի Քեշթազլու. ինձ հետ վեր-
ցրի բաւականի ընտիր ուտելիքներ, զինիներ. բա-
րեկամուհուս համար մի զոյգ ժւէնի ձեռնոցներ. ե-
րեխաների համար ոտնամաններ: Բարեկամուհուս
տանը հիւրասիրութիւն պատրաստելով՝ հրաւիրեցի
մուշտարիներին, ծանօթներին, և իրան Դիմիտրին:

Տանտիկինը Դիմիտրիի շարժւածքից և դէմքից
նկատեց, որ նամակը ստացել է. իսկ իմ վերաբեր-
մամբ համոզւած էր, որ ես բոլորովին տեղեկութիւն
չունիմ: Նա հարցնում էր ինձ Դիմիտրիի տիրութեան
պատճառը, ես պատասխանում էի, որ չգիտեմ. հա-

կառակ դէպքում, համոզւած էի, որ նրան ինձ հետ կը թշնամացնեմ:

Դիմիտրին վերաւորել էր, որ հիւրասիրութիւնը իր տանը չեմ պատրաստել. նա ենթադրում էր, որ իր անգգոյշ վարմունքով վերաւորել է ինձ: Մօտեցաւ, թեիցս բռնեց, սենեակի մի անկիւնը բաշելով ասաց. «Ինչպէս տեսնում եմ, մեր տղայ, վերաւորել ես». ես չպատասխանեցի:

— Խօստովանւում եմ, անգգոյշ եմ վարել. բայց իմ վարմունքը դու պիտի վերագրէիր կրածս հարածի ազդեցութեանը և ինչպէս հարկն է, ներողամիտ լինէիր: Եթէ դու շարունակում ես դարձեալ վիրաւորւած մնալ ինձնից, կրկին ու կրկին ներողութիւն եմ խնդրում, հակառակ դէպքում իմ այստեղ մնալը աւելորդ եմ համարում:

Նա տրամադիր էր հեռանալ. ստիպւած էի կրկին դերասանութեան դիմելու: Փաթաթեցի «աղպօրս» վըզովը, համբոյրներովս ծածկելով նրա ծաղկահար դէմքը. հանդիսաւոր կերպով երգեցի նրա թանկագին անունով: «Քո ազիզ արևն եմ ասում, քեզ թողեմ. եթէ այսուհետեւ իմանաս, ուրիշի տան եմ իջնանել, ինձ էլ մարդու տեղ չես. եթէ տնիցդ էլ վռնդելու լինիս, դարձեալ չեմ հեռանայ»: Դիմիտրին էլ երգեց. եթէ մինչև անգամ տեսնելու լինի ինձ Սաթինիկի հետ զրկախառնւած, նա իր աչքերին չի հաւատայ, դա նա կը համարէ իմ կողմից Սաթինիկին սիրել, ինչպէս իր հարազատ եղբօր կնոջը:

Յանգամանքները այնպէս դասաւորւեցին, որ մի-

հարւածով երկու նապաստակի խփեցի: Յիւրասիրութիւնը շատ յաջող անցաւ, միայն Դիմիտրին էր տըխուր: Մի քանի օրւայ ընթացքում ճակատը կնճռուել էր: Չնայած իմ գործադրած ջանքերին և զանազան գինիներին, նրա վրայ ոչ մի ազդեցութիւն չէր գործում: Նա խելագարի պէս աչքերը մանէր ածում, կարծելով՝ նամակի հեղինակը հիւրերի մէջ պէտք է լինի: Վիրաւորւած, դարան մտած վազրի նման՝ ամեն ըոպէ պատրաստ էր յարձակելու թշնամու վրայ, պատառպատառ անելու նրան:

Յետոյ Սաթինիկը ինձ պատմեց, որ գիշերները չի քնում, ախ ու վաշ անելով է լուսացնում, շատ ժամանակ լաց է լինում:

Իսկ այն օրը, մինչև իմ գնալը, Սաթինիկին ոտքի տակն է առել, որպէսզի մօրթէ, բայց ինքը աղաչել, պաղատել է ու մի կերպ համոզել, որ նամակի հեղինակը իրենց թշնամին է, զրպարտել է, որպէսզի Դիմիտրին իրեն սպանէ: Եթէ նա այդ ոճրագործութիւնը կատարէ, թշնամին իր նպատակին հասած կը լինի: Միայն այդ հանգամանքը բաւական էր, որ Դիմիտրին իր մտադրութիւնը չիրագործէր:

Ինչ անել, ինչ ելք որոնել, ահա այն հարցը, որ յաճախ ծագում էր, իմ գլխում և անմիջական պատասխանի սպասում: Եթէ Սաթինիկը ամուսնաթող լինէր, մնար տեղս, Դիմիտրին ոչ միայն հանգստութիւն չէր տալ, այլ և հաւի պէս կըմօրթոտէր մեզ: Յասարակութիւնը էլ կըգտնէր, որ շատ իրաւացի է վարել. դատարանը նրան խիստ պատժի չէր ես-

Թարկիլ, ընդունելով, որ յանցանքը մեղմացնող պատճառներ կան: Իսկ եթէ Դիմիտրին անտարբեր գտնուէր, որ չէր կարելի նոյն իսկ երեսակայել, նա այդպիսի մի քայլով հասարակութեան աչքում կը կորցնէր իր բոլոր արժանաւորութիւնները: Նոյնը կլինէր և Սաթինիկի համար, նա հասարակութեան մէջ դիրք ունենալ չէր կարող. կը համարուէր անբարոյական մի կին: Մեր կապը եկեղեցին չէր ընդունիլ և ոչ մի կերպ ապահարզան չէր տալ: Այգպիսով իմ և Սաթինիկի կեանքը անտանելի կլինէր. որովհետեւ կար մի «Դիմիտրի» որը բարոյական ոչ մի իրաւունք չունենալով, բայց ըստ տեղային սովորութեան խոչնդոտ էր հանդիսանում մեզ. ուստի հարկաւոր էր ազատել նրանից:

Իմ երջանկութեանը համար հարկաւոր էր մի ուրիշի գոյութիւնը ոչնչացնել: Ես սարսափեցի այդ մտքից, ուզեցի հեռացնել, մեռցնել իմ նէշ այդ ամենը, բայց չէի կարողանում, անիծեցի այն սովորութիւններն ու կարգերը, որոնք մարդուս շրջանակի մէջ են դրել, երջանիկ աշխարհը դժոխք դարձրել, որից դուրս անկարելի էր ապրել:

Մինչ այդ երբ ես ստում, խաբում, ուրիշներից մտքերս ծածկում էի, ինձանից չէի ամաչում, բայց վերոյիշեալ եզրակացութեան դալը ինձ սարսափեցրեց: Չգիտեմ հետևանքիցն էի վախենում, թէ «խիղճ» անւանա՞ծ մի վեցերորդ զգայարանից, որը իմ մէջ այդ օրւանից կարծես ծնունդ առաւ և նրա անուղք ձայնը Թափանցեց իմ հոգու խորքերը ու ոչ մի բժշկա-

կան օգնութիւն չ' կարողացաւ լռեցնել նրան: Կըրկնում եմ, պարզօրէն պատմում եմ ձեզ այն բոլորը, ինչ որ ինձ հետ, սրտումս կատարելէ:

Այն հիւրասիրութեան օրը բարեկամուհիս առանձին ուշադրութիւն էր դարձնում ինձ վրա, որով առիթ տւեց կարծելու, թէ նա իր արածից զղճացել է: Մինչդեռ հիւրերը զբաղւած էին կերութեամբ, նա յաջողեցրեց ինձ, իր սենեակներից մէկում տեսնել Սաթինիկի հետ:

Սաթինիկը սովորականից աւելի գեղեցիկ թւաց անձ այդ օր, թէև նա տխուր, գունատւած, ցրտաշունչ հայեացքով էր նայում ինձ: Սև մէտէօրից, առոնց որևէ զարդի, հագուստը աւելի էր վսեմացրել նրա դէմքը, ես դա վերագրում էի նրա յղի լինելուն: Գրկեցի այդ անգին գանձը, որ յղի լինելով աւելի սիրելի էր դարձել ինձ համար ու անյագ համբուրում էի: Նա մի թեթև շարժումով վերջ տւեց իմ զմայլանքին, ցածր, քնքոյշ ձայնով, շունչը ներս քաշելով, ներողամտաբար, բայց դրականացէս յայտնեց:

— Սբրօ ջան, իմ անտանելի կեանքը շարունակւում է, իսկ դու քէֆերով ես զբաղւած. բոլորովին չես մտածում, մեղմացնել տանջանքներս: Կրկնում եմ, սիրելիս, ինձ համար անտանելի է այս կեանքը. ես պէտք է ազատեմ և որքան կարելի է շուտ:

Նա չցանկանալով լսել իմ երդումները, խօստումներն ու դիմումները, արագ շարժումով ազատւելով գրկիցս, շատ սառը կերպով ասաց:

— Չնայած ինձ համար շատ ծանր է, բայց սի-

ընդհատ, մենք պէտք է խոյս տանք այսպիսի առանձնակի տեսութիւնից. մինչև չապահովւի մէջ զաւակի կեանքը: Լսում ես. մենք ոչ մի իրաւունք չունենք վտանգել մի անմեղ արարածի կեանք: Դու ես ինձ ուղեկցողը. ես մի թոյլ կին եմ ամբողջապէս, ինձ յանձնել եմ քեզ. թէկուզ ատիր, այդ միւսնոյն է, դու ես մեր նաւի ղեկավարը, դու ես պատասխանատուն:

Նրա աչքերը լցեցին, արտասուքի երկու խոշոր կաթիլներ ընկան ցած:

— Պատասխանիր, Աբրո. ասա, ի՞նչ պիտի լինի այս բոլորի վերջը, ո՞վ է լինելու իմ օգնականը:

Ինձ համար անտանելի էր նրա թշուառ, հիասթափւած դրութիւնը: Թոյլ չտեցի այլևս շարունակել. չորեցի, գրկեցի ոտները, ուղեցի բացատրութիւն տալ. բայց նա իր հոլանի թևը շարժելով, ոտքի մի թեթև հրոցով, կրակոտ աչքերի մի խիստ հայեացքով արգելեց ու հեռացաւ սենեակից:

Որպէս մի դեռահաս պատանի մնացել էի չորած, շւարած, շփոթւած և գալիքների մասին հաշիւ տալ չէի կարողանում:

Ո՞վ թոյլ արարած, միթէ դու ես իմ իրաւունքի իշխանը...

Ես բնաւութեամբ անսանձ մարդ եմ, բայց այդ էակի առաջ անգոր էի: Կարծէք սառը ջուր էին թափել գլխիս: Վերադարձայ սեղանակից ընկերներիս մօտ: Քէփը սովորական ձև էր ստացել. ուտում, խմում, խօսում, ծիծաղում, վիճում էին բոլորը մի-

ասին, այնպէս որ իրար չէին հասկանում: Շարունակել անկարող էի, ուստի հիւրերից ներողութիւն խնդրեցի, որ պիտի վերադառնամ քաղաք, խնդրեցի բարեկամիս իմ տեղը կառավարել հիւրերին, իսկ ես ճանապարհեցի:

* * *

Ես անկարող էի մոռանալ Սաթինիկի վերջին տեսքն ու խօսքերը: Մի ելք էր հարկաւոր: Մի ստոր և խորամանկ միջոցով, գործին մի այնպիսի ընթացք տւեցի, որ Դիմիտրիին բանտարկեցին:

Մի շաբաթ անցնելուց յետոյ զանազան ուտելի-ղէններով գնացի բանտ՝ իբր «աղպօրս» այցելութեան: Սակայն քննիչը դեռ չէր քննել. բանտարկեալի մեղքերը որոշած չէին, ուստի բանտի ծառայողները չթոյլատրեցին տեսնւելու. բայց ծառայողներից մէկին տւածս մի բուրդին, տարած սւտելիղէնները և գրած նամակս հասցրին նրան ու բերեցին ինձ նրա գրած նամակը, որը չնայած լի էր երախտագիտական սրբտաշարժ խօսքերով, սակայն ինձ վրայ ոչ մի ազդեցութիւն չգործեց: Բայց ուրախ էի, նամակը կարգալով իմացայ, նա ամենևին չէր կասկածում, որ իր բանտ նետելու պատճառը ես կարող էի լինել:

Մի քանի օրէր, Սաթինիկիս չէի տեսել: Բանտից դուրս գալով ուրախ, տրամադրութեամբ անմիջապէս ճանապարհեցի Քեշթագլու:

Նա ուրախ էր, շքեղ և զարդարւած: Սուրճ էր

պատրաստում, ազահութեամբ յամբուրեցի նրա ինձ մեկնած ձեռքերը: Մի քանի օրւայ ընթացքում նա կերպարանափոխել էր: Ոչ մի տեղ այնպիսի ներդաշնակութիւն չէի տեսել. նրա մարմնի նուրբ գծւածքները վարագուրւած էին ամենանուրբ մետաքսէ կրէմ բէնուարով, որը քարշ էր ընկած գեղեցիկ ծալքերով. ոչ գօտի ունէր կապած, ոչ էլ կօրսէտ. այդ կապանքներից ազատ էր թողնւած մարմինը: Աչքերս անթարթ յառած ոտքից ցզլուխ դիտում էի կրուժկաներով բարուրւած այդ հրաշագեղ արարածին: Նրա ամբողջ հասակը, ճկուն մէջքն ու իրանը, լայն կիսաբաց կուրծքը, գեղեցիկ գլուխը, բրգաձև, որոշ բարձրութեամբ սանրած, սև գոհարներով զարդարւած, մազերը, ինձ ամբողջապէս գերել էին: Հագուստի լայն թևերից երևում էին սիրուն բազուկները, իսկ քղանցքի ներքևից նայում էին ոսկէթել գործւած փոքրիկ ոտնամանները: Ակամայ հարց էի տալիս. այդ ինչ ոյժէ այս աննման արարածի դեկաւարողը...

Նա իսկոյն հասկացաւ իր ինձ վերայ թողած տպաւորութիւնը, յաղթանակողի նման՝ աւելի ինքնավստահութիւն, կենդանութիւն ստացաւ և նրա աչքերը բոցավառեց չբաւարարւած ցանկութեան անանց կրակով:

— Լաւ է, որ միջնադարեան ծնունդ չես, ուրիշներին գայթակղութեան պատճառ չգառնալու համար քեզ կայրէին կրակի հնոցում:

— Կամ ինչպէս սրբութիւն կը պաշտէին, ասաց նա և խնդալի հայեացք գցեց վրաս:

Խօստովանում եմ, վերջին ասածս աւելի ճիշտ էր:

Ես Սաթինիկի մօտ եղածս ժամանակ ամենինչ մօռանում էի, երևակայութեան աշխարհն էի անցնում: Ժամերով նա թախտին յինւած, իսկ ես ծնկաչոք, բուռն կրքոտութեամբ, խանդոտ համբոյրներով ծածկում էի նրան ոտքից ցզլուխ. այդ ըոպէին նա էր իմ հաւատը, իմ Աստուածը, իմ յոյսը:

— Դու ինձանից վիրաւորւած ես, չէ՞, Աբբօ ջան, հարցրեց նա խոնարհ նայելով աչքերիս:

— Յարկաւ, դու ինչո՞ւ այն օրը ինձ...

— Սիրելիս, քո անտարբերութեամբ այն օրը ինձ գժւացրիր: Ես քեզ հետ սառ վարեցի և ամբողջ օրը աչքերիցս արտասուքը չէր ցամաքում: Խօստովանում եմ, մարդուս համար կայ միայն մի վիշտ, այդ այն է, երբ մարդս ինքնադաւաճանութիւն է գործում: Դէ, ներիր ինձ:

Նա բռնեց ձեռքիցս, քաշեց դէպի իրեն ու գլորկախառնւած համբուրուեցինք:

— Հետեիր ինձ, ասաց նա շորերը ուղղելով:

Ինձ տարաւ իր ննջարանը, որը զարդարւած էր այնպիսի ճալակով, որ վայելչութիւն էր տրամադրում: Մինչև անգամ մահճակալը, աւելի շոյում էր խանդոտ սէր, քան հանգստութիւն: Այդ օրը և գիշերը անցկացրի նրա մօտ: Սաթինիկը չէր խնայում գործադրել իր բուռն սիրոյ բոլոր ճարտարութիւնները. այդ ըոպէները իմ կեանքի վերջին գարունն էր: Երանի մեռնէի նրա գրկում. երանի նա ինձ կլաներ, ծծեր իմ արիւնս. յիշում ես սարդի պատմութիւնը...

Նրա ձայնը թուլացաւ, նւագեց, դէմքին տիրեց հիասթափութիւն, նրա պատմելու եռանդը յանկարծ կորաւ:

* * *

Շուտով իմացայ, որ Դիմիտրիոն բանտից կապտեն ու մեր ապահովութիւնը երկարատեւ չի լինի: Մի բան էր ինձ մնում կատարել մի սոսկալի ոճիր...

Դիմիտրիոն քաջ էր, հեշտութեամբ չէր կարելի նրան սպանել: Թէպէտ և արբեցող, թուղթ խաղացող էր. ուստի որոշեցի սպանութիւնը այնպէս կազմակերպել, որ հասարակութիւնը չիմանայ. միջոց անգամ եթէ հնարաւոր լինի՝ թունաւորել նրան:

Մայիս ամսին Դիմիտրիոն արձակեցին բանտից: Նրա ծանօթներն ու բարեկամները ուրախութիւնից քէֆեր սարքեցին, ես էլ յետ չէի մնում: Դիմիտրիոն համարեայ ամեն օր քէֆերով էր զբաղւած: Նա չցանկանալով մի առժամանակ գիւղ վերադառնալ, Սաթինիկին բերել տւեց քաղաք: Ուրիշների համար ուրախ, իսկ ինձ համար սե օրեր էին սկսւել: Յարմարութիւն չկար տեսակցելու Սաթինիկի հետ, նա չէր ուզում վտանգի ենթարկել մեր զաւակի կեանքը: Ոչ մի տեղ հանգստութիւն չէի գտնում, չդիտէի ինչ անել, որպէսզի մօռացութեան տայի իմ տխրութեանը: Կամ քէֆերով էի զբաղւում, կամ ձիով դնում էի քաղաքից դուրս ման գալու, կամ փակւում էի սենեակումս, պատւիրում, ոչ ոքի չնդունել:

Երբ պառաւ մայրս մտեում էր սենեակս, դէմքս ծածկում էի, որ չտեսնէ արտասուներից կարմրած աչքերս: Փորձում էի երբեմն կարդալ, կամ խմել մինչև մօռացութեան. ոչինչ չէի յաջողւում: Շատ ժամանակ կարծում էի, թէ խելագարւում եմ. ինքս ինձ հետ էի խօսում, որով վախեցնում խեղճ մօրս, մինչև իսկ մի անգամ նա առանց ինձ յայտնելու ուղարկել էր բժշկի ետևից: Իմ այդպիսի դրութիւնը ձգգձգում էր վճիռը ի՛կատարածել: Ընկերներս գիտենալով, որ Դիմիտրիին բազմամարդ տեղում խփել, կնշանակէ իրենց յանձնել նրա ընկերների դատաստանին, չէին շտապում և օրը-օրի ետևից էին գցում:

Ահա այդ ժամանակ Սաթինիկը մեզ օգնութեան հասաւ: Նա որոշեց վաղ առաւօտեան զբօսանքի տանել ամուսնուն քաղաքի աւերակները. մեր որոշած տեղին մօտ, ուր և կիրազործենք մեր դատավճիռը:

Յունիս ամիսն էր:

Սաթինիկի հետ պայմանաւորւած ժամից սկսած՝ ինձ վատ էի զգում, բայց ինքս ինձ քաջալերում էի: Օհ, ինչեր կըտայի, եթէ կարողանայի մոռանալ այդ օրը: Օհ, խղճի արթնանալու այդ օրը սեանար. այդ խիղճը, որ կարողացաւ խաչ դնել իմ կեանքի գոյութեան վրայ...

Նա ծանր ախ քաշեց ու շարունակեց:

Երանի չլուսանար այդ օրը... Մենք հինգ հոգով Ղ.թաղում, քարափների մի տան մէջ, ներքին յարկում, մի խոնաւ մութ մառանում ուտելեղէններ, խմիչքներ շարած՝ քէֆ էինք անում ու սպասում թէ

երբ վերի յարկում թագնւած մեր ընկերը անմեղ, միամիտ զոհի գալուստը կաւետէ մեզ: Նա այդտեղից դիտում էր այն փողոցը, որտեղից պիտի երևար Դիմիտրին:

Օ՛հ, իմ սիրելի, իմ անգին եղբայր, ես տանջւում, չարչարւում եմ, բոլորովին հիւանդ եմ, խղճա ինձ: Դու հանգիստ ես, դու մոռացել ես... քեզ հետ տարար իմ կեանքի բոլոր երջանկութիւնները, իմ բախտը, իմ բերկրանքը...

Այլևս իմ կեանքի արևը երբէք ինձ չի ժպտալու: Եթէ զգայիր, թէ որպէսի ծանրութեան մի քար է կախւել խղճիցս... Եթէ կարողանայիր զգալ, թէ այս աշխարհում որպիսի տանջանք, չարչարանք, վիշտ է ինձ բաժինն հասել... Եթէ մի բոպէ իմանամ, որ կեանքիս գնով ներման կարժանանամ քեզնից, ճ, ես առանց մտածելու ինքնասպանութիւն կը գործէի:

Լսիր, լսիր իմ աղաչանքը, միմիայն դու, դու կարող ես ինձ հանգստութիւն պարգևել, դու և ոչ այլ ոք. շուրջս ամայի՝ դատարկութիւն է տիրում: Լսիր, սիրելի եղբայր, դու ինձ «եղպայր» էիր անւանում, դու ինձ սիրում էիր... Միթէ, ես արժանի եմ այսքան ծանր պատժի... Ոյժ, ցանկութիւն չունեմ ապրելու, խղճա, խղճա ինձ, ազատիր ինձ խղճիս այս սոսկալի տանջանքներից:

Նա երկու ձեռքով բռնեց գլուխը, հեկեկալով սկսեց արտասուել. արտասուքը հեղեղի պէս թափւեցին նրա աչքերից: Ես ջուր բերի տեցի նրան՝ առաւ ու խմեց: Նա չէր կարողանում ազատ շունչ քաշել, ձեռքը դրած կրծքին սղմում էր սիրտը:

Առաջարկեցի երեսը լւանալ, քիչ հանգստանալ. նա հրաժարեց ու խեղդուկ ձայնով շարունակեց:

— Ես թէ անհանգիստ, և թէ անհամբեր էի. զգում էի սրտիս ծանրութիւնը: Ամեն վայրկեան ուզում էի խնդրել ընկերներս, որ չիրագործեն վճիռը, բայց ոյժ չունէի: Ես պատրաստ էի տալ նրանց բոլոր ունեցածս, չորած՝ նրանց ոտքերը լիզել. չնայած համոզւած էի, որ ինձ ծաղրի առարկայ կը շինէին:

Շուտ-շուտ կօնեակին էի դիմում, այդ էլ չէր օգնում: Բերանս չորացել էր, բռնքերիս մօտ կուշ եկել, սղմւել էին մկաններս, որից զգում էի մի անտանելի ցաւ: Ականջներս ճիչ էին արձակում, զգում էի, որ չպիտի կարողանամ տանել այն տեսարանը. բայց շարունակում էի լուռ նստել:

Լեզուս ցամաքել. կպել էր քիմքիս:

Ընկերներս զբաղւած էին կերութեամբով, բոլորովին չէին նկատում, Թէ ինչ է կատարւում ինձ հետ: Այն բոպէին նրանք զգւելի էին ինձ համար: Քաշւել էի սենեակի մի անկիւնը, երեսիս խաչահանում, աղաչում Աստծուն, որ նրանք զգան...

Ժամը 11-ն էր:

«Պատրաստեցէք»... լսեց վերի յարկից ահաբեկչի ձայնը, ինքն էլ շտապ-շտապ իջնում էր սանդուխներից ցած: Զգացի գլխիս ինչ որ ծանր հարւած, լսելի էր սրտիս արագ բաբախումը... Կոկորդս սղմեց, թուքս ցամաքեց, ջուր վերցրի, խմեցի: Ծնկներս, ոտներս դողում էին, օդ չկար. որ շնչէի:

Մարդասպաններից երկուսը մնացին նստած, միւս երկուսը թագնեցին դռան ետեւում: Ճրագը ազօտ լուսաւորում էր թանձր, խոնաւ մառանը:

Դուռը բացւեց. Դիմիտրին ներս մտաւ: Նրան սեղանի մօտ նստածներից մէկը կօնեակով լի բաժակը ձեռքին, «Դիմիտրիյ ջան, ա՛, գալուստդ բարի» ասելով դիմաւորեց, նրան. իսկ միւսը «քեզ մատաղ, ուռւա՛» պոռալով մօտեցաւ և թեւախառն գրկեց Դիմիտրին կարծելով թէ դա արբեցողների մէջ ընդունւած սովորական փաղաքշանքի ձևերին են, չնդիմացաւ: Այդ ժամանակ ընկերս աննկատելի կերպով ետեւից մօտեցաւ ու մի ակնթարթում բէհբուտը խրեց նրա կուրդը: Տեսարանը սոսկալի էր. լսեց անտանելի խոխոց. արիւնը շատրւանի պէս խփում էր. կարմիր հեղուկը, բղխում էր կոկորդից: Մենք բոլորս լողում էինք նրա շուրջը արեան մէջ:

Դեռ բէհբուտը խրւած էր նրա կոկորդում. բայց նա մի գօրեղ շարժումով, վայրկեանապէս ազատեց մարդասպանի գրկից, մերկացրեց սուրը և աչքերը արին լցւած յարձակւեց նրա վրայ. բայց այդ ընդմէջին նրա աչքերը նկատեցին ինձ... Օ՛հ, այն ինչ հայեացք էր... Նա ապշեց, մի պահ քարացաւ սոսկումի հետ նա ամենինչ հասկացաւ. մի բառ էր ուզում արտասանել, մի զարհուրելի բառ... Այդ միջնադէպից օգտւելով ահաբեկիչը, դարձնի մեծ մուրձով մի այնպէս հարւած հասցրեց նրա գլխին, որ նա անշարժ փալասի նման ընկաւ տեղիս ու տեղը:

Ամեն ինչ կարմիր էր, խոնաւ, տաք, կպչոյ

արիւնի հոտը տարածւել էր շուրջը: Յետեանքը չիմացայ, օդ չկար շունչ քաշելու, շուրջս խաւար կապոյտ գոյն ստացաւ, որի մէջ մի սև կէտ էր նշմարւում...

Երբ աչքերս բացի, ես ինձ սենեակումս գտա. պառաւ մայրս գլխիս ինչ որ ցուրտ ծանր բան էր դնում: Նրա խօսակցութիւնից իմացայ, որ տամսեհօթն օրէ, ինչ պարկած եմ. Դիմիտրին անյետ կորել է, դիակը չեն գտել. — ասում են, որ թուրքերը վերցրել, յօշոտել ու ծածկել են...

Բաւական էր Դիմիտրի անունը լսել, իսկոյն ըզգում էի այն խոնաւ, կպչոյ, տաք արեան հոտը, նորից ամեն ինչ սևանում էր գլխիս և կրկին հիւանդութիւնս շարունակւում էր անվերջ: Ա՛հ, այն անտանելի օրը...

Ահա այդ օրւանից անցել է երկու տարի, իմ անբաժան վիշտ հանգիստ չի տալիս, տիրել է մտքիս, սուզւել է իմ ամբողջ էութեանս մէջ: Օրս ու է, ապագաս անտանելի, անցեալս, սոսկալի...

Նա շղաճգական ցնցումով թափահարեց ձեռքը:

Բժիշկները գտնում են, որ նիարդերս քայքայւել, թուլացել են. որ հոգեպէս հիւանդ եմ, երկարատև ու հանգիստ բժշկութիւն է հարկաւոր: Ոմանք էլ խորհուրդ են տալիս մի քանի սպանութիւններ գործեմ, որ իսպառ կը բժշկւի հիւանդութիւնս: Մարդասպաններ... Այն, ինչ մարդս մի երկար կեանքով է ձեռք բերում ու դրա համեմատ եռանդ գործադրում՝ ես մի քանի ըոպէսում այդ խրեցի: Անմիտ, աննպա-

տակ կեանքը իր ծանր փորձառութեան հարւածներով
ինձ մաշեց: Այն փորձը, որը ուրիշները երկար տարի-
ների աշխատանքով են ձեռք բերում, ես մի քանի
րոպէի մէջ ըմբռնեցի, հասկացայ: Ես հասկացայ իմ ինչ
լինելը. արհամարհում եմ թէ ինձ և թէ բոլոր բարքերը:

Ինչ է կեանքը ներկայումս, խաբէութիւն, բռ-
նութիւն, սուգ, կռիւներ, զազիր բամբասանք, խնա-
մէութիւն, ստորութիւն, որոնց մի մաս դիմակա-
ւորած է կուլտուրայով... Բոլորը, բոլորը կաւեղէն
են, ոչնչութիւն, խաբուսիկ ինչպէս մերած՝ խաղալիք
զարձած կնոջ ձեռքին: Մարդս առանց կամքի թոյլ
ոչնչութիւն է...

Ես կարճ կտրելու և նրա փիլիսոփայութիւննե-
րին վերջ տալու համար հարցրի,—ասացէ՛ք խնդրեմ,
որտեղ մնաց տիկին Սառան:

Տիկին Սաթէնիկը, ուղղեց նա, դժգոհ.—չգիտեմ:
Սուում են, որ մեր... . . . շարքերում յայտնի
դեր է խաղում և մինչև անգամ մի քանի մարդիկ,
նրա սիրտը զրաւելու համար, իրար կոտորել են:
Նրեխայի մասին էլ նա սուտ էր հաւատացրել ինձ:

—Բայց դուք...

Նա չթողեց, որ ես խօսքս վերջացնեմ:

Իմ մասին հարցնելը աւելորդ է. այսքանը կա-
ւելացնեմ, որ այս իմ փորձառութեամբ լի կեանքով
եկայ այն եզրակացութեանը, որ գեղեցկութիւնը գո-
յութիւն ունի աշխարհիս զգւելի տգեղութիւնները
ծածկելու համար...

Սդաիւնը իմ քնահոր ներս բերեց ու շատ զար-
մացաւ, որ մենք զեռ չենք պարկել քնելու:

Թէյից յետոյ նա հեռացաւ...



9m4-1

1-50

ՀՀ Ազգային գրադարան



NL0321741

22029

891.99

4-9P